Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
սեպտեմբերի 11-ի N 1304 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ, ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ

1. Հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների տեսակները ոստիկանության սպառազինություն մեջ ընդգրկվում և սպառազինությունից հանվում են համապատասխանաբար ոստիկանության լիազորությունների իրականացման կապակցությամբ առաջացող անհրաժեշտության կամ դրանց հետագա կիրառման անթույլատրելիության կամ անարդյունավետության հիմքով:

2. Հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների տեսակները ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկվում և սպառազինությունից հանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Հատուկ միջոցների տեսակները ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկելու կամ սպառազինությունից հանելու համար ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը սահմանված կարգով առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն:

3. Ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը սույն կարգի 2-րդ կետով նախատեսված առաջարկությունը ներկայացնում է իր կողմից ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) եզրակացության հիման վրա:

4. Հանձնաժողովը բաղկացած է առնվազն հինգ անդամից: Հանձնաժողովի կազմում կարող է ընդգրկվել համապատասխան բնագավառի փորձագետ:

5. Ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցներ կամ անհատական պաշտպանության միջոցների նոր տեսակներ ընդգրկելու կամ առկա տեսակները

սպառազինությունից հանելու հարցը հանձնաժողովը քննարկում է ոստիկանության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հայտի հիման վրա:

6. Հանձնաժողովը եզրակացություն է տալիս ոստիկանության սպառազինության մեջ հատուկ միջոցներ կամ անհատական պաշտպանության միջոցների նոր տեսակներ ընդգրկելու կամ սպառազինության մեջ առկա տեսակները հանելու նպատակահարմարության մասին:

7. Հանձնաժողովը համապատասխան եզրակացությունը ներկայացնում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարին՝ սույն կարգի 5-րդ կետում նշված հայտը ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

8. Սպառազինության մեջ հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների նոր տեսակներ ընդգրկելու հարցի քննարկման ընթացքում հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված հատուկ միջոցի տեսակի տեխնիկական բնութագիրը, նկարագրությունը, շահագործման կանոնները, առկայության դեպքում՝ այլ պետությունում կատարված փորձարկումների (փորձաքննությունների) արդյունքների վերաբերյալ նյութերը և իրավասու մարմինների կողմից դրանք կիրառելու մասին տեղեկությունները, ինչպես նաև մարդու նկատմամբ հատուկ միջոցի տվյալ տեսակի կիրառման համար թույլատրելի չափանիշների վերաբերյալ առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմնի գրավոր դիրքորոշումը:

9. Սույն կարգի 8-րդ կետում նշված դիրքորոշումը ստանալու համար հանձնաժողովը գրությամբ դիմում է առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմին:

10. Սույն կարգի 9-րդ կետում նշված գրությանը կցվում են սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը և տեղեկությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հատուկ միջոցի տվյալ տեսակը:

11. Առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը մարդու նկատմամբ հատուկ միջոցի տվյալ տեսակի կիրառման համար թույլատրելի չափանիշների վերաբերյալ դրական դիրքորոշում է ընդունում միայն այն դեպքում, երբ հատուկ միջոցի տվյալ տեսակը չի կարող մարդու առողջությանը պատճառել

ծանր վնաս կամ մարդու օրգանիզմում առաջացնել անդառնալի փոփոխություններ կամ նրան մահ պատճառել կամ չհիմնավորված ռիսկի աղբյուր լինել:

12.Առողջապահության ոլորտի քաղաքականությունը մշակող մարմինը համապատասխան դիրքորոշումը հանձնաժողովին ներկայացնում է սույն կարգի 9-րդ կետով նախատեսված գրությունը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում:

13. Եթե հանձնաժողովի կողմից եզրակացություն տալու համար անհրաժեշտ է կատարել փորձաքննություն, ապա հանձնաժողովն իրավասու է որոշում ընդունել՝ փորձաքննություն նշանակելու մասին միջնորդություն ներկայացնելու ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարին: Փորձաքննական ծառայությունը ձեռք է բերվում տվյալ տարվա պետական բյուջեով ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում:

14. Հանձնաժողովը եզրակացություն է տալիս հատուկ միջոցների կամ անհատական պաշտպանության միջոցների տեսակները սպառազինությունից հանելու մասին, եթե դրանք՝

1) հանվել են արտադրությունից.

2) կարող են փոխարինվել մարդու կյանքի կամ առողջության համար առավել նվազ վտանգավոր և արդյունավետ համանման այլ տեսակով.

3) շահագործման համար այլևս պիտանի չեն:

15. Հատուկ միջոցների կամ անհատական պաշտպանության միջոցների տեսակները շահագործման համար ճանաչվում են ոչ պիտանի, եթե՝

1) դրանք հետագա շահագործման համար ոչ պիտանի են դարձել ֆիզիկական մաշվածության, վթարների, տարերային աղետների, ռազմական գործողությունների, շահագործման կանոնների խախտման հետևանքով կամ շահագործման և պահպանման ժամկետները լրանալու պատճառով.

2) դրանց հետագա օգտագործումն անհնար կամ տնտեսապես աննպատակահարմար է.

3) դրանք ենթակա չեն նորոգման:

16. Սույն կարգի 14-րդ կետում նշված եզրակացությունը պետք է պարունակի նաև հետևություն՝ սպառազինությունից հանման ենթակա հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների տեսակները ոչնչացնելու մասին:

17. Սպառազինությունից հանված հատուկ միջոցների և անհատական պաշտպանության միջոցների տեսակները Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի «Սպառազինությունը, ռազմական տեխնիկան ու ռազմական նշանակության այլ նյութատեխնիկական միջոցները շահագործման համար ոչ պիտանի ճանաչելու և դրանց օտարման կամ ոչնչացման կարգը հաստատելու մասին» N 1698-Ն որոշմամբ սահմանված կարգով ոչնչացման նպատակով փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն՝ հանձնման-ընդունման ակտով, որը ստորագրում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից՝ լիազորված պաշտոնատար անձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

11.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ